10.57192/18291864–2023.4–320

Սիլվա Վ. Պապիկյան
Բանասիր. գիտ. թեկնածու

ՌՈՒՍԵՐԵՆԻՑ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԵՐԵՆԻՆ ԱՆՑԱԾ ՀԱՏԿԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ*

Բանալի բառեր – հատկական փոխառություններ, իրույթ, բառապաշար, լեզվակիր հանրույթ, միջազգային բառեր, իմաստային խումբ, պատմական ժամանակաշրջան, բառիմաստի փոփոխություն, միջնորդավորված փոխառություններ, փոխատու լեզու:

Մուտք

Ինչպես հայտնի է, կա բառապաշարի հարստացման երկու ճանապարհ՝ ներքին և արտաքին: Ներքին ճանապարհով բառապաշարը հարստանում է տվյալ լեզվի հնարավորություններով նոր բառեր կազմելու և բառիմաստի փոփոխության միջոցով: Արտաքին ճանապարհը բառապաշարի հարստացումն է ուրիշ լեզուներից կատարված փոխառություններով՝ որպես հետևանք տարաբնույթ շփումների՝ տնտեսական, քաղաքական, մշակութային և այլն: Հայերենը պատմական զարգացման ընթացքում շփումների մեջ է եղել տարբեր ժողովուրդների հետ և բնականաբար կատարել է բազմաթիվ փոխառություններ հատկապես հարևան ժողովուրդների լեզուներից՝ իրանական լեզուներից, արաբերենից, ասորերենից, թյուրքական լեզուներից, վրացերենից, ռուսերենից և այլն: Վ. Աբաևի կարծիքով՝ ժողովրդի և նրա լեզվի պատմությունը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից՝ 1. լեզվի պատմությունից գնալ ժողովրդի պատմություն, 2. ժողովրդի պատմությունից գնալ լեզվի պատմություն՝ օգտագործելով ազգային պատմության տվյալները բացա-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.11.2023:

տրելու փաստերը, գործընթացները, որ կատարվում են լեզվում[1]: Ժողովրդի պատմությունն անպայման իր կնիքն է դնում լեզվի զարգացման վրա: Երբ մի ժողովուրդ գտնվում է մեկ այլ ժողովրդի քաղաքական տիրապետության տակ, բառապաշարում հստակորեն երևում է այդ ազդեցությունը կատարված փոխառությունների քանակով: Բոլոր դեպքերում պատմական ժամանակաշրջանը, քաղաքական իրավիճակը, փոխադարձ շփումների հնարավորությունը իրենց ազդեցությունն են ունենում տվյալ լեզվում: Կարևոր են նաև հարևան ժողովուրդների հետ տնտեսական, առևտրային, մշակութային փոխհարաբերությունները: Փոխադարձ շփումների հետևանքով անհրաժեշտաբար կատարված փոխառությունները միատարր չեն: Դրանց մի մասը կատարվում է փոխառու լեզվում նոր առարկան, երևույթը նշելու համար: Հնարավոր է, որ որոշ ժամանակ անց ստեղծվի այդ բառի համարժեքը, և դրանք կարող են որոշակի ժամանակահատվածում գոյատևել կողք կողքի: Ի վերջո հաղթում է դրանցից մեկը կամ ենթարկվում իմաստային տարբերակման:

Փոխառությունների մեջ առանձնանում է մի շերտ, որում ներառված են **հատկական փոխառությունները**[2] (անվանում են նաև **տարաշխարհիկ բառեր**, **էկզոտիզմներ**, **օտար բառեր**): Սրանք այն փոխառյալ բառերն են, որոնք ցույց են տալիս այս կամ այն ժողովրդին, երկրին հատուկ երևույթներ, սովորություններ, իրեր և այլն: Սովորաբար դրանք գործածվում են, երբ խոսքը վերաբերում է տվյալ ժողովրդին բնորոշ իրույթներին (ռեալիաներ): Հատկական փոխառություններն անցնում են այլ լեզուների բառապաշար, որի լեզվակիր հանրույթը կարող է նույնիսկ ծանոթ չլինել փոխատու ժողովրդի մշակույթին. փոխառությունը տեղի է ունենում հիմնականում թարգմանական գրականության և զանգվածային լրատվության միջոցներով: Հատկական փոխառությունների ճակատագիրը տարբեր է լինում: Հաճախ դրանք ընդլայնում են իրենց գործածության շրջանակը՝ անցնելով տարբեր լեզուների, և հարում են միջազգային բառերի շերտին՝ այնուամենայնիվ պահպանելով որոշակի ազգային նրբերանգ: Դրանք, կարելի է ասել, ժողովրդական բա-

1 Տե՛ս **Абаев В.**, О принципах этимологического словаря, «Вопросы языкознания», М., 1952, N 5, էջ 56-69:

2 Տե՛ս **Աղայան Է.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1984, էջ 169:

ռեր են՝ ստեղծված տվյալ ժողովրդի աշխարհայացքի, մշակույթի, կենցաղի հիման վրա: Դրանց միջոցով որոշակիորեն արտահայտվում են նաև հեղինակի հուզական-զգացական վերաբերմունքը տվյալ առարկայի, երևույթի նկատմամբ և պատմական ժամանակաշրջանի, միջավայրի, իրադարձության մասին պատկերացումները:

Հատկական փոխառությունները կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից՝ ըստ ծագման, ըստ իմաստային խմբերի, ըստ բառիմաստի փոփոխության, ըստ գործածության հաճախականության, ըստ ժամանակային հատկանիշի և այլն:

Մի քանի հոդվածներում անդրադարձել ենք տարբեր լեզուներից հայերենին անցած հատկական փոխառություններին[3]: Այս հոդվածում մեր նպատակն է դիտարկել ռուսերենից հայերենին անցած հատկական փոխառությունները, դասակարգել ըստ իմաստային խմբերի և հնարավորինս ցույց տալ դրանց զարգացման ընթացքը:

Բացառիկ է ռուսերենի ազդեցությունը հայերենի վրա: Արևելյան Հայաստանի՝ 1828 թ. Ռուսաստանին միավորումից հետո հայ ժողովրդի կյանքում ռուսերենի ազդեցությունը մեծանում է. Հայաստանում հիմնվում են ռուսական գիմնազիաներ, հրատարակվում են թերթեր, հայ երիտասարդները բարձրագույն կրթություն են ստանում Ռուսաստանի լավագույն համալսարաններում, ծանոթանում ռուսական բարձր մշակույթին: Ռուսերենը ծառայում է որպես միջազգային հաղորդակցման միջոց բազմազգ Ռուսաստանի տարբեր ժողովուրդների հետ շփվելու համար: Մեծ է ռուսերենի դերը նաև եվրոպական և մյուս լեզուներից կատարված թարգմանությունների միջոցով համաշխարհային գրականությանը, գիտական նորագույն նվաճումներին ծանոթանալու առումով: Խորհրդային տարիներին ավելի է մեծանում ռուսերենի ազդեցությունը ոչ միայն հայերենի, այլև Խորհրդային Միության մյուս բոլոր լեզուների վրա:

Ռուսաստանը, լինելով բազմազգ պետություն, ունի բազմաթիվ հատկական փոխառություններ՝ վերցված իր կազմում գտնվող

3 Տե՛ս **Պապիկյան Ս.**, Արաբական ծագման հատկական փոխառությունների քննություն, «Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու», 2021, N 10, էջ 341–349, **նույնի՝** Հատկական փոխառությունների քննություն, «Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու», 2021, N 11, էջ 313–323, **նույնի՝** Իրանական ծագման հատկական փոխառություններ, «Լեզու և լեզվաբանություն», Եր., 2022, N 1 (26), էջ 77–85:

ժողովուրդների լեզուներից, որոնք, սակայն, հայերենը փոխառել է ռուսերենի միջնորդությամբ, ուստի դրանք համարվում են ռուսական բառեր:

Ռուսերենի միջնորդությամբ հայերենը բազմաթիվ բառեր է փոխառել նաև այլ լեզուներից, որոնք հիմնականում միջազգային բառեր են: Դրանք լատիներենից (սենատ, սատիրա, մինուս, պրոլետարիատ), հունարենից (դրամա, տրագեդիա, կոմեդիա, էպոս, ռիթմ, քաոս), անգլերենից (բասկետբոլ, ֆուտբոլ, թենիս, պրեսինգ, տրամվայ, տրոլեյբուս), ֆրանսերենից (ավանգարդ, դուբլյաժ, կուպե, մանեժ, պատեֆոն), գերմաներենից (շտրիխ, տուշ), իտալերենից (արիա, լիբրետո, սոպրանո, տենոր), ֆիններենից (տունդրա) և այլ լեզուներից անցած բառեր են:

Տարբեր աղբյուրներից (գեղարվեստական գրականություն, բառարաններ, մամուլ, հեռուստաթեթեր) մեր հավաքած նյութը հնարավորություն է տալիս ռուսերենից և ռուսերենի միջնորդությամբ հայերենին անցած հատկական փոխառությունները դասակարգելու հետևյալ խմբերում՝ *կացարան-բնակավայր-տարածք*, *արվեստ-գրականություն, քաղաքական ուղղություններ, հագուստ, ընդհանուր անվանումներ*: Ներքոբերյալ բառերի մի մասն այլ լեզուներից է, սակայն դրանք այնքան են արմատացել ռուսերենում, որ դրանց փոխառյալ լինելը նույնիսկ լեզվակիր հանրույթը չի գիտակցում:

1. Կացարան-բնակավայր-տարածք

Խուտոր < ռուս. хутор[4] < հին բարձր գերմ. huntari «մարզի մաս». «պատմ. Ռուսաստանում՝ մեկուսի կալվածք՝ հողամաս՝ տիրոջ տնտեսության և բնակության շինություններով (Ռուսաստանում), ագարակ»[5], ***ստեպ*** < ռուս. степь (ծագումը հայտնի չէ). «տափաստան» (ԱՀԲԲ, էջ 1330), ***տայգա*** < ռուս. тайга < թուրք. «վայրի՝ դժվարանցանելի ընդարձակածավալ փշատերև անտառային գոտի, որ տարածվում է Եվրոպայի, Ասիայի և Ամերիկայի հյուսիսում» (ԱՀԲԲ, էջ 1408), ***տունդրա*** < ռուս. тундра < ֆին. tunturi. բառացի՝ «անտառա-

4 Տե՛ս **Шанский Н., Иванов В., Шанская Т.**, Краткий этимологический словарь русского языка (այսուհետև՝ КЭСРЯ), М., «Просвещéние», 1971, էջ 483:

5 Տե՛ս **Աղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), հատ. 2, Եր., «Հայաստան» հրատ., 1976, էջ 619:

զուրկ, ողորկ գագաթ». «երկրագնդի արկտիկական գոտու հարավային շրջանը՝ խիստ կլիմայով անտառազուրկ տարածություն» (ԱՀԲԲ, էջ 1403):

2. Արվեստ-գրականություն

Բալալայկա < ռուս. балалайка. բնիկ ռուսերեն բառ՝ առաջացած բարբառային **балобайка**-ից՝ *балы*՝ «կատակ» և *байка*՝ «հեքիաթ, պատմվածք» (ԿՏՍՐՅ, էջ 32). «երաժշտական եռալար եռանկյունաձև գործիք, որ նվագում են մատներով», ***բալագան*** < ռուս. балаган < թյուրքական լեզուներից < պարսկ. балахāна «բարձր տուն» (ԿՏՍՐՅ, էջ 33). հայերենում բառը բազմիմաստ է. «1. ժամանակավոր թեթև շինություն թատերական, կրկեսային, երաժշտական հանդիսությունների համար (սովորաբար՝ տոնավաճառներում), 2. կատակերգական, ֆարսային բնույթի թատերախաղ», ունի նաև փխբ. իմաստ՝ «արհմրհ. տեսարան, որ նման է բալագանային տեսարանին, այսինքն՝ կոպիտ, գեղարվեստական ճաշակին հակառակ, անկարգ, անլուրջ»[6], ***բայան***՝ բնիկ ռուսերեն բառ. երաժշտական գործիք, որի անունը ծագում է հինռուսական բանաստեղծ-երգիչ Բայանի (Баян) անունից. տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում՝ հատկանուն > հասարակ անուն անցում (ԿՏՍՐՅ, էջ 39), ***բիլինա***[7]՝ ռուսերենի **быль** «իրողություն, եղելություն» բառից. բառացի՝ «ինչ եղել է, կատարվել է իրականում». «ռուսական ժողովրդական բանահյուսության ժանր. ասք-երգեր նշանավոր դեպքերի, հերոսների մասին», ***գալյորկա*** < ռուս. галёрка < ֆր. խսկց. «թատրոնի վերին՝ էժանագին տեղերով օթյակաշարք» (ԱՀԲԲ, էջ 215), ***մատրյոշկա*** < ռուս. матрёшка. բնիկ ռուսերեն բառ, որը Матрёна[8] հատուկ անվան փա-

---

6 Տե՛ս **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հատ. 1, Եր., ՀՍՍՌ պետ. հրատ., 1944, էջ 316:

7 **Բիլինաները** ստեղծվել են 11-16-րդ դդ. Ռուսաստանի հյուսիսային շրջաններում, որոնց հեղինակները եղել են ժողովրդական երգիչները: Դրանցում ներկայացվում են պատմական նշանավոր դեպքերի, դյուցազունների՝ Իլյա Մուրոմեցի, Այոշա Պոպովիչի, Դոբրինյա Նիկիտիչի մասին պատմություններ (տե՛ս **Զրբաշյան Է.**, **Մախչանյան Հ.**, Գրականագիտական բառարան, Եր., «Լույս» հրատ., 1972, էջ 54):

8 Այսպիսի իմաստային փոփոխություն կա ուրիշ տիկնիկների՝ **петрушка**, **ванька-встанка**, անվանումներում, **марионетка** բառում, որը բաղադրված է **Marie** հատուկ անունից: Ֆրանսիական միջնադարյան տիկնիկային թատրոնում սկզբնապես

ղաքշական-փոքրացուցիչ ձևն է, հետագայում բառիմաստի ընդ-լայնման՝ հատկանուն > հասարակ անուն անցման հետևանքով՝ матрёшка, ***չաստուշկա*** < ռուս. частушка. բնիկ ռուսերեն բառ. «ռուսա-կան ժողովրդական քնարերգության տեսակ՝ բաղկացած չորս տո-ղից, մեծ մասամբ կատակախառն բնույթի, որ կատարվում է երգի ուղեկցությամբ»[9], ***պետրուշկա***[10] < ռուս. петрушка. «1. ռուսական ժո-ղովրդական տիկնիկային ներկայացման գլխավոր երգիծական կերպարը, 2. անհեթեթ, ծիծաղելի, զարմանալի բան»[11], ***պոլիշինել*** < ռուս. полишинель < ֆր. «ֆրանսիական ժողովրդական թատրոնի ավանդական գործող անձ, զվարճաբան, հնարագետ»[12], ***սկոմորոխ*** < ռուս. скоморох[13]. «1. թափառական երգիչ-երաժիշտ Հին Ռուսիա-յում: 2. փխբ. անլուրջ, կատակաբան մարդ»:

3. Դիմելաձև-կոչում

Ատաման < ռուս. атаман. հինռուսական փոխառություն թյուր-քական լեզուներից՝ «մեծ հայր, գլխավոր» իմաստով, բաղադրված *ата* «հայր» գոյականով և *-ман* վերջածանցով (ԿՏՍՌ, էջ 30), ***բա-ռին*** < ռուս. барин. բնիկ ռուսերեն բառ (**բոյարին** (боярин) բառի ձևափոխված տարբերակն է), ***բարինյա*** (**барыня**). բնիկ ռուսերեն բառ՝ առաջացած **բոյարինյա** (боярыня) բառի կրճատումից, ***բարիշնյա***

Marionette անվանվում էին միայն կույս Մարիամին ներկայացնող տիկնիկները, ավելի ուշ այդպես սկսեցին կոչվել նաև թելերով կամ մետաղալարերով վերևից կառավարվող տիկնիկները: Բառը հետագայում ձեռք բերեց «խամաճիկ, խաղա-տիկնիկ» իմաստը, փոխաբերացման հետևանքով՝ «ուրիշի կամքը կատարող գոր-ծիչ կամ պետություն, խաղալիք»:

9 Տե՛ս **Զրբաշյան Է., Մախչանյան Հ.**, նշվ. աշխ., էջ 223:

10 Բառը համանունական շարք է կազմում ռուսերեն **петрушка** «սնդի մեջ օգտա-գործվող կանաչի» բառի հետ:

11 Տե՛ս **Ожегов С.**, Словарь русского языка (այսուհետև՝ СРЯ), М., «Советская энциклопе-дия», 1970, էջ 506:

12 **Պոլիշինելի գաղտնիք**-ը հայտնի դարձվածք է, որ նշանակում է «գաղտնիք, որը վաղուց հայտնի է բոլորին»:

13 Բառի ծագումը ստույգ չէ. հավանական է համարվում ծագումը հունարեն *skōmmarchos «կատակի, ծաղրի վարպետ» բառից (տե՛ս ԿՏՍՌ, էջ 412): **Սկոմորոխ-ները** թափառական դերասաններ էին Հին Ռուսաստանում: Առաջին տեղեկություն-ները 11-րդ դարից են: Ավանդական հերոսը կենսուրախ, հնարագետ, բայց միամիտ մարդու կերպարով գեղջուկն է: Կարծիք կա, որ նրանց արվեստին հատուկ որոշ առանձնահատկություններ փոխանցվել են պալատական ծաղրածուներին:

< ռուս. барышня. բնիկ ռուսերեն բառ[14], ***բոյար*** < ռուս. боярин[15]. «պատմ. ֆեոդալական հասարակության վերնախավը 10–17–րդ դդ. Ռուսաստանում», ***բոյարինյա*** < ռուս. боярыня. «բոյարի կին», ***բոյարիշնյա*** < ռուս. боярышня. «բոյարի չամուսնացած աղջիկ», ***կուլակ*** < ռուս. кулак «բռունցք». հինռուսական փոխառություն հավանաբար թյուրքական լեզուներից՝ «հարուստ գյուղացի սեփականատեր» իմաստով (ՀՐՄ, էջ 303), ***պրիստավ*** < ռուս. пристав. «1. ցարական Ռուսաստանում՝ ոստիկանության ղեկավար ադմինիստրատիվ ոչ մեծ շրջանում, 2. Հին Ռուսաստանում՝ պաշտոնական անձ՝ որևէ գործ վերահսկելու համար» (ՀՐՄ, էջ 389), ***վոյեվոդ*** < ռուս. воевода. համասլավոնական բառ, հավանաբար բաղադրված է *вои* «*войско*» («զորք») և *вода* «*вождь*» բառերից (ԿԷՀՐՄ, էջ 87). «Հին Ռուսաստանում՝ զորքի, ինչպես նաև մարզի, շրջանի ղեկավար» (ՀՐՄ, էջ 86), **ցար** < ռուս. царь < цезарь < լատ. Caesar. «պատմ. մի քանի երկրներում (առավելապես նախահեղափոխական Ռուսաստանում) միապետի տիտղոսը և այդ տիտղոսը կրող անձը, արքա» (ԱՀԲԲ, էջ 1473):

4. Քաղաքական ուղղություններ, հոսանքներ

Բոլշևիկ < ռուս. большевик՝ կազմված *больше* բառից և *–евик* վերջածանցից. «1. 1903 թ. ՌՍԴԲԿ 2–րդ համագումարում Լենինի գլխավորությամբ մեծամասնություն կազմած բոլշևիկյան կուսակցության անդամ: 2. հետևողականորեն մարտնչող մարքսիստ» (ԱՀԲԲ, էջ 199), ***դեկաբրիստ*** < ռուս. декабрист. «պատմ. Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի և ինքնակալության դեմ 1825 թ. դեկտեմբերի 14–ին տեղի ունեցած ապստամբության մասնակից» (ԱՀԲԲ, էջ 86), ***էսէռ*** < ռուս. СР՝ эсэр (социалист революционер – սոցիալիստ-հեղափոխական). հապավում՝ կազմված կուսակցության անվան առաջին տառերից. «մանրբուրժուական կուսակցություն Ռուսաստանում. կազմավորվել է 1902 թ. նարոդնիկական խմբերի համախմբու-

14 Բառիմաստի զարգացումն ընթացել է հետևյալ կերպ՝ дочь боярина > девица благородного звания > молодая девушка (տե՛ս ԿԷՀՐՄ, էջ 37):

15 Հավանական է համարվում բառի ծագումը համասլավոնական **bojarь** (бояре) բառից՝ բաղադրված *–арь* վերջածանցով և *бои* «битва, сражение» գոյականով: Բառի առաջնային նշանակությունը «воин» է (տե՛ս նույն տեղում, էջ 55):

մով»[16], ***կադետ***[17] < ռուս. кадет < ֆր. «պատմ. ցարական Ռուսաստանում՝ ռազմական միջնակարգ դպրոցի սան», ***մենշևիկ*** < ռուս. меньшевик՝ կազմված *меньше* բառից և *–евик* վերջածանցից. «գլխավոր օպորտունիստական հոսանք ՌՍԴԲԿ-ի մեջ, միջազգային օպորտունիզմի տարատեսակ» (СРЯ, էջ 337), ***նարոդնիկ*** < ռուս. Народник. «նարոդնիկության[18] հետևորդ», ***Չեկա*** < ռուս. *чека* < հապավում՝ черезвычайная комиссия. «պատմ. հակահեղափոխության, սաբոտաժի, սպեկուլյացիայի դեմ պայքարելու արտակարգ հանձնաժողով 1918–1922 թթ.» (СРЯ, էջ 864, ՕԲԲ, էջ 405), այստեղից՝ *չեկիստ* (*чекист*) «Չեկայի աշխատող»:

Ինչպես երևում է վերոբերյալ օրինակներից, այս բառերը առնչվում են պատմական տարբեր ժամանակաշրջաններում Ռուսաստանում տեղի ունեցած հասարակական-քաղաքական զանազան իրադարձությունների և բնորոշ են ռուսական կյանքին՝ մեկ անգամ ևս հավաստելով, որ յուրաքանչյուր լեզու պետք է դիտարկվի տվյալ ժողովրդի պատմական զարգացման համատեքստում:

5. Հագուստ

Բաշմակ < башмак «կոշիկի տեսակ». հինռուսական փոխառություն թաթարերենից, հավանաբար առաջացել է իմաստային փոփոխության հետևանքով **башмак**-ից՝ «մեկ տարեկան հորթ». կազմված է **баш** (баш) «գլուխ» բառից (КЭСРЯ, էջ 38). ենթադրելի է՝ կոշիկը կարվել է հորթի կաշվից, ***բեշմետ*** < ռուս. бешмет < թյուրքական լեզուներից. «տղամարդու բամբակե հագուստ, որ տարածված է Հյուսիսային Կովկասի և Միջին Ասիայի ժողովուրդների մոտ» (ՕԲԲ, էջ

16 Տե՛ս **Հայրապետյան Ա.**, Օտար բառերի բառարան (այսուհետև՝ ՕԲԲ), Եր., Հեղինակային հրատ., 2011, էջ 195:

17 **Кадет** բառը ռուսերենում հանդես է գալիս համանունական շարքով՝ 1. «մինչ հեղափոխությունը՝ ցարական Ռուսաստանում միջնակարգ ռազմաուսումնական հաստատության սան», և 2. «նախահեղափոխական Ռուսաստանում՝ սահմանադրական-դեմոկրատ, կադետական կուսակցության անդամ»: Կազմված է *ка*(конституционный) և *дет* (демократ) բառերի կրճատումից՝ *ка* + *дет* (տե՛ս КЭСРЯ, էջ 182, СРЯ, էջ 254):

18 Նարոդնիկությունը քաղաքական շարժում էր Ռուսաստանում 19-րդ դ. երկրորդ կեսին, որը ժխտում էր բանվոր դասակարգի դերը հեղափոխության մեջ և իդեալականացնում էր գյուղացիությանը:

91), ***բուշլատ*** < ռուս. бушлат. «1. նավաստու մահուդե բաճկոն, 2. խսկց. մգդակած հաստ վերնազգեստ». ծագումը հայտնի չէ. ենթադրվում է, որ առաջացել է գերմ. *Buscherum* «ձկնորսական վերնաշապիկ» + արաբ. *xalat* բառերի միացությունից (ՕԲԲ, էջ 110), ***կաֆտան*** < ռուս. кафтан < թյուրքական լեզուներից. «երկարափեշ վերնազգեստ» (СРЯ, էջ 265), ***կիտել*** < ռուս. китель < գերմ. «զինվորական (նաև քաղաքացիական) լանջերը բաց բաճկոնակ» (ՕԲԲ, էջ 284), ***շինել*** < ռուս. шинель < ֆր. «զինվորական վերարկուի տեսակ» (ՕԲԲ, էջ 399), ***մունդիր*** < ռուս. мундир < ֆր. < գերմ. «զինվորական կամ քաղաքացիական հատուկ ձևի համազգեստ» (ՕԲԲ, էջ 377), ***սարաֆան*** < հինռուսական փոխ. < թյուրքական լեզուներից < պարսկ. serāpā. «1. կանացի թեթև՝ առանց թևքերի ամառային զգեստ, 2. պատմ. ռուսական ազգային կանացի զգեստ» (СРЯ, էջ 689), ***տուժուրկա*** < ռուս. тужурка < ֆր. *toujours* «միշտ» + *–ка* վերջածանց (КЭСРЯ, էջ 454). «տնային կամ տարազային երկլանջ բաճկոն» (ՕԲԲ, էջ 578), ***տելոգրեյկա*** < ռուս. телогрейка. բառացի՝ «մարմինը տաքացնող». «1. բամբակե բաճկոն, 2. կարճ տաք բաճկոն՝ առանց թևքերի» (СРЯ, էջ 781):

6. Ընդհանուր անվանումներ

Բայդարկա < ռուս. байдарка. «սպորտ. մակույկ՝ ջրային սպորտի և տուրիզմի համար». բնիկ ռուսերեն բառ՝ կազմված *байдара* «նավակ» գոյականով և *–ка* վերջածանցով (КЭСРЯ, էջ 32), ***բատրակ*** < ռուս. батрак (հավանաբար փոխառված թյուրքական լեզուներից) (КЭСРЯ, էջ 37–38). «կուլակային կամ կալվածատիրական տնտեսություններում աշխատող վարձու բանվոր, մշակ», ***բուռլակ*** < ռուս. бурлак. «նավաքարշ բանվոր». բնիկ ռուսերեն բառ՝ կազմված *бурло* «աղմկարար» բառով և *–ак* վերջածանցով (КЭСРЯ, էջ 63), ***խոլոպ*** < համասլավոնական բառ. «Հին Ռուսաստանում՝ ստրուկ, ճորտատիրական Ռուսաստանում՝ գյուղացի, ծառա, փխբ.՝ ստրկամիտ, քծնող» (СРЯ, էջ 853). ծագումը հայտնի չէ, ***մուժիկ***[19] < ռուս. < հին ռուս.՝ կազմված *мужь–мужчина* գոյականով և *–икь* վերջածանցով. սկզբնա–

19 Հիշենք Ե. Չարենցի «Բալլադ Վլադիմիր Իլյիչի, մուժիկի և մի զույգ կոշիկի մասին» բալլադը. «.... *Էխ–էխ, մուժիկ: Մուժիկին հարկավոր է – մի զույգ կոշիկ....*»:

կան նշանակությամբ՝ «փոքր տղամարդ, տղա» (маленький мужик, мальчик) (КЭСРЯ, էջ 275), հետագայում տեղի է ունեցել բառի բազմիմաստացում. ունի «գյուղացի, ամուսին, հնց.՝ անդաստիարակ, անկիրթ մարդ» իմաստները (СРЯ, էջ 355), գործածվում է նաև դրական երանգով՝ «իսկական տղամարդ» (настоящий мужчина) իմաստով, որը հետևանք է բառիմաստի ընդլայնման:

Եզրակացություններ

Ռուսերենից և ռուսերենի միջոցով հայերենին անցած հատկական փոխառությունների քննությունից պարզվում է՝

1. դրանց մի մասը բնիկ ռուսերեն է և անմիջական փոխառություն հայերենում՝ **բոլշևիկ**, **դեկաբրիստ**, **մենշևիկ**, **մուժիկ** և այլն,

2. մի մասն ընդհանրապես դուրս է եկել գործածությունից և համալրել հնաբանությունների շարքը՝ **բատրակ**, **բուռլակ**, **խոլոպ** և այլն,

3. ռուսերենից փոխառյալ հատկական փոխառությունների մի մասի ծագումը հայտնի չէ,

4. մեծ թիվ են կազմում ռուսերենի միջնորդությամբ տարբեր լեզուներից հայերենին անցած փոխառությունները՝ **տայգա** < ռուս. тайга < թուրք., **տունդրա** < ռուս. тундра < ֆին. և այլն,

5. ռուսերենի միջնորդությամբ եվրոպական լեզուներից հայերենին անցած հատկական փոխառությունները հիմնականում միջազգային բառեր են,

6. հատկական փոխառություններից շատերը պատմական զարգացման ընթացքում ձեռք են բերել նոր իմաստներ. տեղի է ունեցել բառի բազմիմաստացում:

Սիլվա Վ. Պապիկյան – հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է տերմինաբանությունը, բառարանագրությունը և իմաստաբանությունը: Հեղինակ է 4 մենագրության և շուրջ 7 տասնյակ հոդվածների:

Էլ. հասցե՝ papikyansilva@yandex.ru

Համառոտագրություններ

արիմրի. – արիամարիական
լատ. – լատիներեն
խսկց. – խոսակցական
հին ռուս. – հին ռուսերեն
հնց. – հնացած
ռուս. – ռուսերեն
պարսկ. – պարսկերեն
փխբ. – փոխաբերական
ֆին. – ֆիններեն

Summary

THE STUDY OF EXOTICISMS TRANSFER ED FROM AND THROUGH RUSSIAN INTO ARMENIAN

Silva V. Papikyan
Candidate of Sciences in Philology

Keywords – exoticisms, realia, vocabulary, linguistic community, international words, semantic group, historical period, change of word meaning, mediated borrowings, donor language.

The Armenian language has been greatly influenced by Russian especially after the unification of Eastern Armenia with Russia in 1828. The connection between a nation and its history is unarguable and the history of any nation leaves its mark on the language. In this sense political, economic, cultural relations with neighboring nations are important, as a result of which languages borrow many words from each other. Among the borrowed words there are a certain number of exoticisms that indicate objects, phenomena and customs specific to a particular nation or country. Usually, they are used when it comes to culture-specific concepts characteristic of a given nation. The article considers some exoticisms transferred from and through Russian into Armenian, which are classified into the following semantic groups: *accommodation-residence-area, art-literature, mode of address-address, political directions, clothes, common words.*

Based on the examination, it turns out that some exoticisms passed from and through Russian into Armenian are native Russian and direct borrowings in

Armenian - *bolshevik, decembrist, menshevik, muzhik,* etc., some of them completely went out of use and joined the ranks of archaicisms - *batrak, burlak, kholop*, etc., many of them acquired new meanings in the course of historical development resulting in polysemy of the word. The origin of some exoticisms from Russian is unknown.

A large number of borrowings passed from different languages into Armenian through the mediation of the Russian, such as *taiga <Rus. тайга <Turk. tundra <Rus. тундра < Fin.,* etc.

The words borrowed from the European languages are mostly international words.

Резюме

ИЗУЧЕНИЕ ЗАИМСТВОВАННЫХ НЕПОСРЕДСТВЕННО ИЗ РУССКОГО И/ИЛИ ПОСРЕДСТВОМ РУССКОГО ЯЗЫКА ЭКЗОТИЗМОВ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Сильва В. Папикян
Канд. филол. наук

Ключевые слова – экзотизмы, реалии, словарный запас, лингвистическое сообщество, международные слова, семантическая группа, исторический период, изменение значения слова, опосредованные заимствования, язык донора.

Армянский язык находился под сильным влиянием русского языка, особенно после объединения Восточной Армении с Россией в 1828 г. Связь между нацией и ее историей неоспорима, и история любой нации оставляет свой след на языке. В этом смысле важны политические, экономические, культурные отношения с соседними нациями, в результате чего в язык проникают иноязычные слова. Среди заимствованных слов есть определенное количество экзотизмов, которые описывают объекты, явления и обычаи, специфичные для конкретной нации или страны. Обычно они используются, когда речь идет о концепциях (реалиях), характерных для данной нации. В настоящей статье рассматриваются некоторые экзотизмы, перешедшие из русского и/или посредством русского языка в армянский. Они классифицируются по следующим семантическим группам: жилище – поселение –

Պատմական լեզվաբանության հարցեր, ԵՊՀ (ՀԱՀ) տարի, թիվ 4 (84), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2023

территория, искусство – литература, форма обращения – звания, политические направления, одежда, общие слова.

При рассмотрении собранного нами материала выясняется, что некоторые экзотизмы, перешедшие из русского и посредством русского языка в армянский, являются исконно русскими и являются прямыми заимствованиями – *большевик, декабрист, меньшевик, мужик* и т.д., некоторые из них вышли из употребления и пополнили ряды архаизмов – *батрак, бурлак, холоп* и др., большинство из последних в ходе исторического развития приобрели новые значения, что привело к многозначности слова. Происхождение некоторых экзотизмов, заимствованных из русского языка, неизвестно.

Большое количество заимствований перешло из разных языков в армянский посредством русского языка, например *тайга <рус. <тюрк., тундра < рус. < фин.* и т. д. Слова, заимствованные из европейских языков, в основном являются интернациональными словами.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., «Հայաստան» հրատ., 1976:
2. **Աղայան Է.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1984:
3. **Հայրապետյան Ա.**, Օտար բառերի բառարան, Եր., Հեղինակային հրատ., 2011:
4. **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հատ. 1–4, Եր., ՀՍՍՌ պետ. հրատ., 1944–1945:
5. **Պապիկյան Ս.**, Արաբական ծագման հատկական փոխառությունների քննություն, «Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու», 2021, N 10, էջ 341–349:
6. **Պապիկյան Ս.**, Իրանական ծագման հատկական փոխառություններ, «Լեզու և լեզվաբանություն», Եր., 2022, N 1 (26), էջ 77–85:
7. **Պապիկյան Ս.**, Հատկական փոխառությունների քննություն, «Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու», 2021, N 11, էջ 313–323:
8. **Ջրբաշյան Էդ., Մախչանյան Հ.**, Գրականագիտական բառարան, Եր., «Լույս» հրատ., 1972:
9. **Абаев В.**, О принципах этимологического словаря, «Вопросы языкознания», М., 1952, N 5, с. 56–69.
10. **Ожегов С.**, Словарь русского языка, М., «Советская энциклопедия», 1970.
11. **Шанский Н., Иванов В., Шанская Т.**, Краткий этимологический словарь русского языка, М., «Просвещéние», 1971.

REFERENCES

1. **Abajev V.**, O principax ētimologicheskogo slovarja, “Voprosy jazykoznanija”, M., 1952, N 5, s. 56-69 **(In Russian)**.
2. **Aghayan Ē.**, Ardi hayereni batsʻatrakan baṛaran, Yer., “Hayastan” hrat., 1976 **(In Armenian)**.
3. **Aghayan Ē.**, Ĕndhanur yev haykakan baṛagitutʻyun, Yer., Yerevani hamalsarani hrat., 1984 **(In Armenian)**.
4. **Hayrapetyan A.**, Ōtar baṛeri baṛaran, Yer., Heghinakayin hrat., 2011 **(In Armenian)**.
5. **Jrbashyan Ēd., Makhchanyan H.**, Grakanagitakan baṛaran, Yer., “Luys” hrat., 1972 **(In Armenian)**.
6. **Malkhaseantsʻ St.**, Hayerēn batsʻatrakan baṛaran, hat. 1-4, Yer., HSSṚ pet. hrat., 1944-1945 **(In Armenian)**.
7. **Ozhegov S.**, Slovarʻ russkogo jazyka, M., izd. “Sovetskaja enciklopedija”, 1980 **(In Russian)**.
8. **Papikyan S.**, Arabakan tsagman hatkakan pʻokhaṛutʻyunneri kʻnnutʻyun, “Gavaṛi petakan hamalsarani gitakan hodvatsneri zhoghovatsu”, 2021, N 10, ēj 341-349 **(In Armenian)**.
9. **Papikyan S.**, Hatkakan pʻokhaṛutʻyunneri kʻnnutʻyun, “Gavaṛi petakan hamalsarani gitakan hodvatsneri zhoghovatsu”, 2021, N 11, ēj 313-323 **(In Armenian)**.
10. **Papikyan S.**, Iranakan tsagman hatkakan pʻokhaṛutʻyunner, “Lezu yev lezvabanutʻyun”, Yer., 2022, N 1 (26), ēj 77-85 **(In Armenian)**.
11. **Shanskij N., Ivanov V., Shanskaja T.**, Kratkij etimologicheskij slovarʻ russkogo jazyka, M., izd. “Prosveshenije”, 1971 **(In Russian)**.